ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

05.12.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 855-Ա

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 161-Ն որոշումը և Հայկ Մնացականյանի 05.12.2023 թվականի համայնքի անվանումը օգտագործելու թույլտվություն ստանալու մասին հայտը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Բավարարել Հայկ Մնացականյանի կողմից 2023 թվականի համար ներկայացված հայտը և տալ թույլտվություն <<Գորիս Սթոուն Փաուեր>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը համայնքի անվանումը Ֆիրմային անվանումներում օգտագործելու համար:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2023/05/12
Ք.Գորիս